

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրիպի դեմ պատվաստանյութ (կենդանի, ներքթային): *Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ:*

Պատվաստանյութերի մասին շատ տեղեկատվական ձեռնարկներ հասանելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տես՝ www.immunize.org/vis:
Hojas de información sobre vacunas están disponibles en español y en muchos otros idiomas. Visite www.immunize.org/vis

1. Ինչու՞ պատվաստվել:

Գրիպի դեմ պատվաստանյութը կարող է գերծ պահել **գրիպ** վարակվելուց:

Գրիպը վարակիչ հիվանդություն է, որը յուրաքանչյուր տարի տարածվում է Միացյալ Նահանգներում սովորաբար հոկտեմբերից մայիս ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուրը կարող է վարակվել գրիպով, քայքայ որոշ մարդկանց համար դա վտանգ կարող է ներկայացնել: Նորածիններն ու փոքր երեխաները, 65 տարեկան և բարձր տարիքի մարդիկ, հղիները, որոշ հիվանդություններ ունեցողները, թուլացած իմունային համակարգով մարդիկ ենթարկվում են գրիպից առաջացած բարդությունների ամենամեծ ռիսկի:

Թոքաբորբի, բրոնխիտի, սինուսի վարակը և ականջի վարակները գրիպի արդյուքում առաջացած բարդությունների օրինակներ են: Եթե դուք ունեք հետևյալ հիվանդությունները՝ արտի հիվանդություն, քաղցկեղ կամ շաքարախտ, գրիպը կարող է սրել դրանք:

Գրիպը կարող է առաջացնել ջերմություն և տենդ, կոկորդի ցավ, մկանային ցավեր, հոգնածություն, հագ, գլխացավ, քթարտադրություն կամ փակվածություն: Որոշ մարդկանց մոտ կարող է առաջանալ փսխում և լուծ, թեև դա ավելի տարածված է երեխաների, քան մեծահասակների շրջանում:

Մեկ տարվա ընթացքում Միացյալ Նահանգներում միջին հաշվով հազարավոր մարդիկ մահանում են **գրիպից**, ինչպես նաև մարդկանց գզալի քանակություն հոսպիտալացվում է: Գրիպի դեմ պատվաստանյութը կանխում է միլիոնավոր հիվանդություններ և գրիպի պատճառով այցելություններ բժշկին ամեն տարի:

2. Գրիպի դեմ թուլացված, կենդանի պատվաստանյութ:

Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնը (CDC) խորհուրդ է տալիս 6 ամսականից բարձր անձանց պատվաստվել ամեն տարի գրիպի սեզոնին: **6 ամսականից մինչև 8 տարեկան երեխաների համար** գրիպի մեկ սեզոնի ընթացքում կարող է պահանջվել 2 դեղաչափ: Այլոց համար գրիպի յուրաքանչյուր սեզոնի ժամանակ պահանջվում է ընդամենը 1 դեղաչափ:

Գրիպի դեմ թուլացված, կենդանի պատվաստանյութը (կոչվում է LAIV) քթի մեջ փչվող ցողիչ է, որը կարող է տրվել **2-ից 49 տարեկան** հղիություն չտանող անձանց:

Պաշտպանության զարգացման համար պատվաստումից հետո անհրաժեշտ է մոտ 2 շաբաթ:

Գրիպի բազմաթիվ վիրուսներ կան, և դրանք անընդհատ փոփոխվում են: Ամեն տարի գրիպի նոր պատվաստանյութ է ստեղծվում պաշտպանելու համար գրիպային վիրուսներից, որոնք, հավանական է, որ հիվանդության պատճառ դառնան գրիպի մոտակա սեզոնին: Նույնիսկ եթե պատվաստանյութը բավարար չափով չի համապատասխանում այս վիրուսներին, այն դեռևս կարող է ապահովել որոշակի պաշտպանություն:

Գրիպի դեմ պատվաստանյութը **գրիպ չի առաջացնում:**

Գրիպի դեմ պատվաստանյութը կարող է զուգահեռաբար կիրառվել այլ պատվաստանյութերի հետ:

3. Քննարկեք Ձեր բժշկի հետ:

Հարկավոր է զգուշացնել պատվաստում իրականացնողին պատվաստում ստացողի հետևյալ խնդիրների մասին

- **Փոքր է 2 տարեկանից կամ մեծ է 49 տարեկանից:**
- **Հղի է:** Գրիպի դեմ թուլացված, կենդանի պատվաստանյութը խորհուրդ չի տրվում հղիներին:
- **Ունեցել է ալերգիկ ռեակցիա գրիպի դեմ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ լուրջ, կյանքի համար վտանգավոր ալերգիաներ:
- **2-ից 17 տարեկան երեխա կամ դեռահաս է, ով ասպիրին կամ սալիցիլ պարունակող դեղամիջոց է ընդունում:**
- **Ունի Թուլացած իմունային համակարգ**
- **2-ից 4 տարեկան երեխա է, ով ասթմա կամ շնչարգելություն է ունեցել** նախորդ 12 ամսվա ընթացքում:
- **5 տարեկան և բարձր է և ասթմա ունի:**
- **Ընդունել է հակավիրուսային դեղորայք** վերջին 3 շաբաթվա ընթացքում:
- **Խնամում է ծանր իմունային անբավարարություն ունեցող անձանց**, ովքեր պաշտպանված միջավայրի կարիք ունեն:
- **Ունի առողջական այնպիսի խնդիրներ**, որոնք կարող են գրիպի լուրջ բարդությունների բարձր վտանգներ պարունակել (օրինակ՝ **թոքերի հիվանդություն, արտի հիվանդություն, երիկամների հիվանդություն, ինչպես շաքարախտ, երիկամների կամ լյարդի խանգարումներ, նյարդային, նյարդամկանային կամ մարսողական խանգարումներ**):



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

- **Չունի փայծաղ** կամ ունի **չգործող փայծաղ:**
- Ունի **կոխլեար իմպլանտ:**
- Ունի **ողնաշարի հեղուկի արտահոսք** (հեղուկի արտահոսք, որը շրջապատում է գլուղեղը, քիթը, կոկորդը, ականջը կամ գլխի որևէ այլ տեղ):
- Ունեցել է **Գիլյան-Բարեթի համախտանիշ** գրիպի դեմ նախորդ պատվաստումից հետո 6 շաբաթվա ընթացքում:

Որոշ հիվանդների համար գրիպի դեմ պատվաստանյութի մեկ այլ տեսակը (ապակտիվացված կամ ռեկոմբինատ պատվաստանյութ գրիպի դեմ) կարող է ավելի հարմար լինել, քան գրիպի դեմ կենդանի, թուլացված պատվաստանյութը:

Թեթև հիվանդություններով մարդիկ, ինչպիսին է մրսաձուրթունքը, կարող են պատվաստվել: Միջին կամ ծանր հիվանդություններ ունեցող մարդիկ գրիպի դեմ պատվաստում ստանալու համար պետք է սպասեն ապաքինմանը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Ձեր բժշկին:

4. Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

- LAIV պատվաստումից հետո կարող է առաջանալ քթարտադրություն, փակվածություն, շնչարգելություն և գլխացավ:
- Հնարավոր է փսխում, մկանային ցավեր, ջերմություն, կոկորդի ցավ, հազ և այլ կողմնակի բարդություններ:

Եթե այդ խնդիրները առաջանում են, դրանք սովորաբար սկսվում են պատվաստումից անմիջապես հետո և կրում են մեղմ և կարճաժամկետ բնույթ:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, կա շատ փոքր հավանականություն, որ պատվաստանյութը կհանգեցնի ծանր ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասների կամ մահվան:

5. Ի՞նչ անել, եթե լուրջ խնդիր է առաջացել:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ պատվաստված անձի կլինիկական լքելուց հետո: Եթե նկատել եք ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, հաճախացած սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), հարկավոր է զանգահարել **9-1-1** և տուժածին տանել մոտակա հիվանդանոց:

Մտահոգիչ այլ նշանները հարկավոր է քննարկել բժշկի հետ:

Պատվաստանյութերի արդյունքում առաջացած անցանկալի ռեակցիաների մասին հարկավոր է տեղեկացնել պատվաստումների անցանկալի

երևույթների մասին հաշվետվության համակարգին (VAERS): Սովորաբար այս զեկույցը ներկայացնում է Ձեր բժիշկը կամ կարող եք դա անել ինքներդ: Այցելեք VAERS-ի կայքէջ www.vaers.hhs, հղումով կամ զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: *VAERS-ը նախատեսված է բացառապես անցանկալի ռեակցիաների զեկուցման համար, և VAERS-ի աշխատակազմը բժշկական խորհուրդներ չի տրամադրում:*

6. Պատվաստումների վնասի խոփհատուցման ազգային ծրագիր

Պատվաստումների արդյունքում առաջացած վնասի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է որոշակի պատվաստումներից տուժած մարդկանց վնասի փոխհատուցման համար: Պատվաստումներից ենթադրյալ վնասների կամ մահվան արդյունքում առաջացած պահանջները ունեն ներկայացման ժամկետ, որը կարող է նույնիսկ լինել ընդամենը երկու տարի: Այցելեք VICP կայքը www.hrsa.gov/vaccinecompensation կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով՝ ծրագրի մասին տեղեկանալու և հայց ներկայացնելու համար:

7. Ինչպե՞ս ստանալ լրացուցիչ տեղեկություն:

- Զրուցեք Ձեր բժշկի հետ:
- Զանգահարեք Ձեր տեղամասային կամ նահանգային առողջապահական վարչություն:
- Պատվաստանյութի փաթեթավորման ներդիրները և այլ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են Մանդի և դեղերի վարչության (FDA) կայքում հետևյալ հղումով՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Դիմեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (CDC):
 - Զանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - այցելեք CDC-ի կայք հետևյալ հղումով՝ www.cdc.gov/flu:

